



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



4989 - 4995

1971  
202.3  
G-38



g243

09323

1401

40

ՀԵՅՏԱԿ ԻՎԱՆՅԱՐԵՎ

ԱՂԵՐՍ

ՄԱՄ ԵՐԵՐՈՐԻ

# ՆԱԽԱԳԻՑԵԼԻՑ

Ոյս աղերսիս նիւթը որչափ որ ասանկ չորս հինգ թերթի չափ  
 երկու երեք աւուր մէջ պտտրաստած ենք , որ մեր գրասենեակը կը  
 մնայ . կուղէինք ամէնքը մէկ հատուած մը ընելով ամբողջ հրատա-  
 քակել , սակայն տպագրիչները հինգ կամ վեց աւուր մէջ այսչափ  
 ձեռագիր տպելը ամենադժուար ցուցունելով . բռնագատուեցանք  
 մաս բաժնելով ամեն շարթու հինգշարթի օրերը ձրիաբար  
 հրատարակել , բայց ոյս շարթու նիւթերուն եւ պարագայներուն  
 շատութիւնը մեզ սոտիպեցին որ 'ի սէր ազգասիրութեան աղերսնուն  
 թերթերը շատցունելով ընդարձակել եւ ամենահարկաւոր գիտել-  
 եաց ցանկ մընալ աւելցունելով որ ցանկին մէջը այս շարթուան  
 մէջ եղած անցբերուն համառօտ տեղեկութիւններ ըլլալով . յօդուտ  
 ազգիս . նպատակ ունենալով սէր , խաղաղութիւն , արդարութիւն  
 եւ իրաւունք : Ընթերցողը կրնան իմանալ ընարաններու որչափ  
 ճառելի ըլլալը եւ նիւթին ծանրութիւնը . բայց եւ այնպէս ազգիս  
 խռովութեան ժամանակը ասանկ թերթի մը հարկաւորութեանը իմ  
 ազգասիրութիւնս զիս ըռնադատելով ոչ ստակ եւ ոչ հանդսուու-  
 թիւնս ինսայեցի այս աղերսիս Բ . մասին շաւտով հրատարակմանը  
 համար , եւ ինչպէս որ ըսի , ստակը անձամբ վճարելով ահա ձեզի  
 ձրի կը բաժնեմ , ինդրելով եւ աղերսելով ձեզ . որ եթէ դուք ալ  
 զիս վարձատրել կ'ուղէք . (ինէ աւելի ազգօգուտ գործեր ընելու  
 կարողութիւն ունեցող շատ կայ մէջէրնիդ ) կ'աղալեմ 'ի փառ-  
 խաղաղասիրին Յիսուսի Քրիստոսի ձեր մեջէն ազգակործան խռո-  
 վութիւն , ատելութիւն , անմիարանութիւնը մէկդի ձգելով ոիրոյ  
 եւ միարանութեան , արդարութեան եւ իրաւանց պաշտպան ըլլաք .  
 որով մենք չէ թէ մեր այս աղերսը ձրի բաժնած կ'ըլլանք . բայց  
 ձեր մեղքերը մէկդի ձգելով մեզի անվարձտարելի կերպով գոհ եւ  
 շնորհակալ ըրած կ'ըլլաք որուն փօխարէն դուք ալ թէ այս անցա-  
 ւոր աշխարհիս մէջ խաղաղ կեանք կրնաք անցընել եւ թէ՝ յաւի-  
 տենական աննկառագրելի փառքին արժանանալ եւ մանաւանդ միշտ  
 մինչեւ յկեանս եւ 'ի մահ ձեզի բարեմազուու ըրած կ'ըլլաք :



( Ա Մ ա ս ի ն շ ա ր ո ւ ն ա կ ու թ ե մ ն ը )

ութիւնը “ մըտից ’ի տուն քո և երկրագից ’ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո : Վմենին զօրաւորը յիշեմ, սիրելիներս, ’ըիստոս Վստուած մեր՝ որ ամէն դառըն և մահաբեր տանջանաց սիրով համբերեց, և զինքը տանջողներուն համար ներումն ինզրեց իւր անձառելի անյիշացարութեամբը՝ ըսելով “ Տե՛ր, թո՞ղ դոցա, զի՞ ո՞չ զիտեն զինչ գործեն . Վսանկ համբերող Վստուած և մարդ կատարեալ մեր Տերը Յիսուս Քրիստոս, որն որ ամէն բանի համբերեց, երբոր իր տանը սրբալզծողները կը տեսնէ, Վստուածային վրէժինզրութիւնը ձեռք կ'առնէ . զիտէ՛ք, ինչ կ'ընէ, երբոր տաձարը կը մտնէ և կըտեսնէ իր հօրը տանը իրաւունքը պլղծող, և առուտուր ընող վաճառաշահները, զիտէ՛ք ինչ կ'ընէ . խարազանը կ'առնէ ու իր անմահական բերնովը զանոնք կը նախատէ ըսելով . “ Տուն իմ տուն աղոթից կոչեսցի, և դուք արարիք զգա այր աւազակաց” : Վյու բաելով կը մերժէ, կը վանաէ և կը հեռացընէ այն չարերը որ արծաթօիրական ոգւով Վուրբ Եկեղեցւոյ անարատութիւնը կը պլղծէն : Ո՞չ, սիրելիներ իմ, դուք՝ որ ’ի Քրիստոս կը պարծիք, ի՞նչպէս Քրիստոսի ըրած աստուածային առաքինութեան հետեւող չ'եք ըլլար . Քըր ըրիստոս Վստուած որ ամեն ցաւի համբերեց, ըլկըցաւ այս մասիս լուռ կենալ, մենք՝ որ իրեն հետեւողները ըլլալիս մեզի փառք ու պատիւ կը համարենք, ինչպէս անոր հրամանը անդնդհատ կատարելէ ետ կըընանք կենալ, և Վնոր ու Իր տանը պատոյն ու սրբութեանը անարատ մնալուն չի ջանալ . ահա ձեր ջանքը և կամ այս պարտականութիւնը կը խնզրեմ : Յիրաւի առաջին թերթերուս մէջ գրածներս յիշելով չ'եի ուզեր իմ ազգափարական գրուածոյս մէջ անիրաւ մարդոց և մատնիշներու անուններ ալ տալ, բայց և այնպէս իմ ազգասիրական և կրօնասիրական ըզզացումն զիս կ'ըս-

տիպէ , որ յակամայից գըրքի տակ առնեմ և այն չարերուն մոլութիւնները՝ որ զմեզ կը գայթակղեցնեն , ըստ պատշաճի պատմեմ , և իրաւունք ունենամ զանոնք եկեղեցիէն մերժուած ձանջնալու ըստ հրամանի Ծեառն մերսյ որ կ'ըսէ “ Եշե ակն քո աջ գայթակղեցուցանէ զբեզ , հա՛տ զնա և ընկեա՞ի քէն ” : Արեմն ձշմարիս քրիստոնէութեան և հաւատարիմ ազգասիրութեան գործադիր ըլլալու փափաքելով կը փութամ ծանուցանելու , որ մեր Շառաքելական Սուրբ Եկեղեցւոյ բարեկարգութեան մէկ մասը սեպած ենք մինչև ցայսը գլըտիս հօտին Քրիստոսի ունենալ Կաթողիկոս , Պատրիարք և Շառաջնորդ անուններով անձինք կրօնաւորաց մէջէն ընարելով . որոնց Քրիստոսի փոխանորդ անունը կուտանք . և ինչպէս որ վերը ըսինք , կլոնաւորաց դասին մէջ , դարձեալ կը կրկնենք լժե որչափ դասն է կրօնաւորներու պակասութիւնը քան զաշխարհականնինը և աւելի ազգակործան է : Հիմա երբոր մեր Պօլսոյ Եկեղեցւոյ Գլուխ Պատրիարքի տիտղոսով և առաքելական Եպիսկոպոս պատուանունով և զրոշմով ձանցուած մարդ մը , երբ իր բոլոր պարտականութիւնները ոտքի տակ կ'առնէ , կամ կիրքով և կամ զանազան շահուց և կամ խռովութիւն սերմաններու դիտաւորութաեմք , ինչպէս կրնանք զանիկայ Քրիստոսի փոխանորդ ձանջնալ . արդեօք այս ձանաշումը Քրիստոնէական վարուց պտուղ կրնայ ըլլալ . կը հարցընեմ ձեզ Քրիստոսի հրամանները չկատարող հովիւ մը , որ իւր Հովուապետին գերազօյն սրբութեանը արատ կը բերէ , արդեօք զանի ընդունողները նոյն Հովուապետին նախատինք և արհամարհանք մը ըրած չե՞ս ըլլար :

Եկսինը մի ըստ միոջէ նկարագրութիւն մը ընել , նոյն եպիսկոպոսի զրոշմով և Պատրիարքի տիտղոսով զարդարուածին վրայ , որ Շատուծոյ արդարութիւնը և իրաւունքը աւրեց ու ստքի տակ առաւ : Պիտէք սիրելիներ , Քրիստոս իւր հօտը վաս-

արկելու համար արին թափեց , Պօլսոյ Պատրիարքը , որ Քրիստոսի փոխանորդ եմ կ'ըսէ , և զոր առար համար ձանցած եմք , իբր եպիսկոպոս և պատրիարք , դիտէք ինչ կ'ընէ , ու ինչ կը խօսի , Պատրիարքի կողմնակից Քրիստոնեայներ , և Քրիստոսի արեամբը գնեալ հօտը յանիրաւի կը մատնէ , և կը զրապարտէ լըբուժեամբ , ինչ սոսկալի զրապարտութիւն . . . Իւարձրապատիւ Փաշային կ'ըսէ թէ՝ “Միլէթիմ Լտէպսիլ օլտու” :

Ո՞չափ ամբարտաւան զրապարտութիւն և ո՞չ չափ յիմարական զրոյց . որովհէտեւ շմածեր թէ Միլէթիմ ըսելով , ազգին ամբովնութիւնը կը հաւկըցուի , որուն մէջ կը դանուեին նաև իրեն սիրելի և կամակից եղող մէկ երկու անիրաւներն ալ :

Քրիստոսի անզին արեամբը գնեալ ժողովաւրդ , ահա քեզ իւր անձնական աշխարհային փառքին համար յանիրաւի զրապարտութիւն ընող և ուրացող մը : Ալքեմի եղայրներ , վերցուցէք ձեր վրայէն Սուրբ Աւագանին շնորհիւր ստացեալ քրիստոնեայ անունը և անանկով Պատրիարքը ձանցէք , որովհէտեւ այն որ Քրիստոսի հետեւողները կ'անարգէ , չՔրիստոս կ'անարգէ : Ալքեմի ի՞նչ ընենք , Քրիստոսի ջեառն մերոյ (ո՞չ , կը սոսկամ ըսելու) հըրամանները ուրքի տա՞կ առնենք , զանի Պատրիարք ձանցւալու համար կ'ընդունիք այս փառքը , և թէ որ բարբարոսութեամբ ընդունիք , Աստուծմէ ի՞նչ պատիժ կ'առնէք :

“Կ որ մեզ ուրացաւ . մե՞ք անիկայ կը ՞րնամք ձանցնալ , չ չուզայի նման անմեղները մասնողին կամակից ըլլալով մեր Քրիստոնէական Սուրբ անունը աղարտե՞՞նք : Երբոք Գեթսեմանիի պարտեզին մէջ Պիզաառոսի զինւորները Քրիստոսի մօտեցան , առաքելոց մէկը Մաղքոսին ականջը կտրեց . իսկ մեր Տէրը ի՞նչ ըրաւ . ականջը բժշկեց զառաքեալը խրատեց : Մարզիս պատրիարքը ժողովուրդը որ Քրիստոսի հօտըն է , զինւորէրու կը յանձնէ . և աւտօնաւաս առի այէս պատրիարքարանը անոնցմով պա-

շարել կուտայ : Հայոց ազգը Պօլիս դալէն՝ 'ի վեր  
ասոր նևանը տեսած չ'է : Ահա ձեղ Քրիստոսի հետ  
աևող հովիւ մը . չի մտածեցի՞ր , ո՞վ անգութ , դու<sup>1</sup>  
կ'երթաս աշխարհէս յաւիտենական պատիժը առ  
նելու Հովուապետէն : Վզգին 4—5 դարերէ՝ 'ի վեր  
( Կամանեան հզօր կայսրութեան քով ունեցած հաւ  
ատարիմ հպատակութեան անիրաւ արատ բերելով .  
դուն քու ըրածներդ մոռցար . բայց ազգը և մեր սերունդը  
երբէք քու մատնութիւնդ և անիրաւ զօր-  
պարտութիւններդ չպիտի մոռնայ . ո՞վ կործանիչ , ա-  
նարատ Վօր մերոյ տուքը եկեղեցւոյ ազգին զաւ-  
կրները զգուելու , սիրելու խրատելու և առաքինա-  
կան զործոց յորդորելու տեղ՝ զանոնք կը նախա-  
տես , արդեօք ի՞նչ փառք կ'առնես Վստուծմէ . Հար-  
ցունեմ քեզի . ազգին հարազատները ու ճշմարիտ  
ազգասէրները ի՞նչու ժողովեցան քու սեւագէմ  
աթուիդ բոլորտիքը . դիտե՞ս ուրիշ պատճառ չկար .  
ո՞չ խռովութիւն , ո՞չ վրդովմանք յարուցանելու և  
ոչ հաւատարիմ հպատակութեան ամենաարդար  
պարտըն մէկ կէտը անդամ փոխելու կամ աւրե-  
լու համար էր : Դուն՝ որ քու ստորագրութիւնդ  
աւրեցիր , դուն որ քու պատիւդ ոտքի տակ առիր ,  
դուն՝ որ քու Վստուծմէ քեզի աւանդ տրուած սուրբ  
Եկեղեցւոյ գառները անարգեցիր , նոյն պարտակա-  
նութիւններդ չարաչար զործածէլդ քեզի իմացնե-  
լու համար եկած էր այն քրիստոսեան հօտը : Ի՞նչ  
ուրախութիւն կը զգայիր Պատրիարք , արդեօք քե-  
զի պէս ամբաստանողին և Վ . . . Գ . . . ի պէս մատ-  
նիչ և Ծուդա չարագործին և Զ . . . Ո . . . ի պէս  
Վ ասակ ու Կայէնին անիրաւ զրադարտութիւննե-  
րով՝ քարեինսամ և առատագութ Խնճսակալը իւր  
անդին հօվանաւորութիւնը ազգին վրայէն կը վերցունէ  
կարծեցիր : Վզգը նոյն Հայոց ազգն է զոր ( Կո-  
մանեան հզօր Պետութիւնը ճանցած է 4—5 դա-  
րերէ՝ 'ի վեր և հաստատ գիտցած է անոր առաջի-  
նի հպատակութիւնը . և այս մասին յայտնի և հա-  
մարձակ կը պարծիմ , որ աշխարհիս վրայ Հայոց ազ-

զին պէս հաւատարիմ, հպատակ և իւր Տիրոջը անդին կենացը միշտ բարեմաղթու և աղօթով շատ քիչ կա . որովհետեւ ինչպէս որ մենք մեր սուրբ հաւատքը ճանցեր ենք և չենք ուզեր ամէն մէկ պարտականութիւններէս ետ կենալ, անանկ ալ հըպատակի մը իր Տիրոջը հնազանդ ու անձնանուեր ըլլալը ճանցած գիտցած ու հաստատած ենք . մաւաւանդ անանկ Ա Եհապետի մը՝ որուն կենաց երկարութեանը ամէն բարի ձեռնարկութիւնները յօ. գուտ ազգիս ժննայելը գիտնալով, միշտ օրհնող և աղօթով ենք . և զիտենք որ իւր հպատակներուն յառաջադիմութիւնը իրեն մեծութեանը ու փառքին նշան կը սեպէ . և բաջ զիտէ որ Տիրութեան մը հպատակը որչափ իմաստուն ու լուսաւորեալ ըլլայ, Տիրութիւնը պարծենալու տեղի կ'ունենայ :

Գանց Ա . . . Գ . . . մասնիշին գուն ի՞նչ ըսել կ'ուզէիր այն օրը փաշային ըսելով թէ, “Ժողովուրդին մէջ դաշոյն ունեցող կայ”, ո՛վ անիրաւ մատնիչ . Հայոց ազգին ինչ ընութեան տէր ըլլալը մինչև հիմայ չորրևեցա՞ր, մինչև հիմա ազգին գործերէն ոտքդ ելեր ու զըսւսդ դատախազ է կանգներ, և վերջին օրերը գայլ ու գառը ’ի միասին Ճարակելը անհնարին ըլլալը գիտնալով՝ ակամայ հըրաժարած եք : Այսոնք վնաս չունին որովհետեւ մատնիչ Յուղային փառքը սկիտի առնես, ան ալ նոյն և նման քեզի պէս ըրաւ . Գեթսեմանի պարտեղին մէջ զքրիստոս Ա ստուածը չլի ճանչնալ ձեացուց : Ա սարսափելի եղեռնագործութիւն . . . բայց ես նախ քան այս չարագործական մասնութիւնդ քու անզգամ բարքդ քու սեպհական տանդ մէջ ինչպէս գործածելը ու վարուելը զիտնալով՝ քու այս միջացիս իմ սրտիս վրայ բացած մահաբեր վերքին դարման մը կըլլայ . քու ազնիւ, հազուագիւտ և առաքինի կինըդ որ ազնուական գերդաստանէ մըն եր, ծագիկ և միանգամայն քաղցը կենաց մէջ եղած ժամանակը՝ ի՞նչպէս չարացար վարուելով և նախատեսմէ և ոանսապան մոլութիւններովդ բերնէն արիւն

ըերել տալով գեռաբոյս հասակին մէջ զերեզմանի  
խո թ անգունդին և աչուելի խաւարին մէջ իջեցուցիր :  
Ո՞ անիրաւ , դոնէ Այսուծոյ քեզի տուած աւանդը  
և սուրբ Խկեղեցւոյ սրբազն և անարատ խորհր-  
դովը քեզի ընկեր ըլլալու ապերջանկութիւն ունե-  
ցողին խնայէիր , նայելով որ իդական սեռէն է և  
միանգամայն մենէ փափուկ ու տկար կազմութեան  
աէր : Ես այս քու եղեռնագործութիւնդ զիմնա-  
լէս շատ գոհ եմ . որովհետեւ եթէ այս զիտցած  
չըլլայի , ան օրուան քու մատնութիւնդ ինձի իմաց-  
նող հրեշտակը միանգամայն հոգիս պահանջելու ե-  
կած պիտի ըլլար ինձի , և կաթուածամահ հարուա-  
ծով զիս մեռցնելու : Ի՞այց ամենագործ քարին Այս-  
ուած ինձի համերառութիւն տուաւ այն միջոցին որ  
նոյն դառն մահուանէն ազատելով կարող ըլլամ 'ի  
սէր յօդուտ ազգիս ձեր ամենասարսափելի մոլու-  
թիւնները ծանուցանելու : Ո՞վ եղեռնագործ , դուն  
Սուրբ անարատ Խկեղեցւոյ բակը ինչ բան ունիս .  
այն տեղը դժոխոյ անհուն ասպարէզը չ'է : Արդա-  
րեւ զիտեմ , ասոր պատասխան տալու կարողութիւն  
ունիս քու գայթակղեցուցիչ քերանովդ , թունառ-  
րիչ լեզուաւդ և չարութիւն հնչող քերանովդ և գո-  
զանական կղակներովդ և զիշատիչ ակուսիներովդ այս  
խնդրոյս պատասխանելու թէ , Յուգան ալ մինչեւ  
Քրիստոսի մատնութեան ներկայ չ'է՞ր մի արդեօք .  
բայց ինչպիս Քրիստոս իր երկրպագելի յարութեամ-  
բը կորսնցուց Յուգան առաքելական դասէն , որն որ  
Տէեղզեբուղի գահին ժառանգորդ եղաւ . անանկ  
ալ քեզի կ'իմացունեմ ո՛վ անիրաւ Ո՞ . . . Գ . . .  
որ այսօր մեր մէջէն ատելութեան և անիրաւու-  
թեան , ամբարտաւանութեան և զուողութեան սա-  
տանայնները կորսնցուցինք , հալածեցինք ու նզովե-  
ցինք . տեղը բերինք Ամենակարողին Աստուծոյ և  
Հոգւոյն սրբոյ շնորհիւը Ուրն Այսուածացային , ըզ-  
խաղաղութիւն , զեղբայրսիրութիւն , զազգամիրու-  
թիւն և զամենայն առաքինութիւն . որմնը անշուշտ  
և անյապաղ յաւիտենականութեան փառքին և աս-

տուածտեսութետն արժանի կ'ընեն զլեզ . ինչպէս  
որ դուն ալ օգոստոս 21 էս 'ի վեր քու սիրելի Յու-  
դայիդ գաղակից և քեզի բարեկամ Կայէնին սեղա-  
նակից ըլլալով՝ Շահեղզեբուզի աթուին յաջորդնե-  
րուն կարգը անցար , վայ և վայ անոր՝ որ քու այս  
անիրաւ և գաղանաքարոյ վարքը և աղքամատնու-  
թիւնդ ճանչնալէն ետքը քեզի հետ կը տեսնուի .  
բայց աղքիս ամենափոքրիկ մէկ անհատին կը սու-  
լը չուզելուս կ'իմացունեմ որ զիրենք պաշտպանեն  
այն թունաւոր օձէն որ Վամայ ու Եւայի յաւի-  
տենական երջանկութիւնը թունաւորելով՝ ի գժոխս  
իջեցուց . (Եւան ալ յիշեցի . որովհետեւ աղամ-  
ներուն մէջ շատերը կարդալ զիանալով՝ կրնան զի-  
րենք թունաւորելու օձը ճանչնալ . դժբաղզաբար  
Եւաներուն ամենքը կարդալ զրել չփիսնալով՝ ա-  
նոնց ալ կ'իմացունեմ որ աղացեն իրենց Վամներուն ,  
որ աշխարհային ամեն օրուան ըզբաղումներէն իրենց  
հոգւոյն համար ալ փոքրիկ մաս մը հանելով՝ անմիտ-  
թար չիթողուն իրենց սիրելու պարտականութիւն ունե-  
ցած Եւաներնին սոյն աղզափիրական զրուածս իրենց  
կարդալով և ասիկայ իրենց պարտըն ալ է . որովհետեւ  
ով որ չուզեր Եւան ուրիշի մատնել , թող այն Վամը  
այս Յուգային պատմութիւնը Եւային ընտ ) . ո՞վ  
չիվախնար և չ սարսափիր այն Կայէնէն . որովհետեւ  
ինչպէս որ Կայէն իւր հարազա և անմեղ եղուայ ըը  
սպաննեց , այս ալ՝ աստուածային հրամանաւ իրեն  
կենակից և ամուսին եղողը սպաննեց . ալ ո՞վ չի-  
վախնար ասանկ գաղանէն թէ զինքը ալ կսպաննէ  
հոգւոյ վերքեր տալով . ահա մենէ իրեն բարեմքաղ-  
թութիւն Կայէնի փառքն ալ . ո՞ր յիմար չիսար-  
սափիր արդեօք այս պատառիչ վայրենի և բարբա-  
րոս գաղանէն , որ Վրիստոսի հօտը մատնել կու-  
զէ , զՎրիստոս . արհամարհած կ'ըլլայ , և եթէ ծե-  
նէ մէկն ալ ասկէ ետքը զանիկայ պատուէ , Վր-  
իստոսի հօտին թշնամի և միայնգամայն Վրիստո-  
սի ատելի ըլլալուն անկասկած եմ . ուրեմն կ'զգու-  
շացնեմ իմ սիրելի և հարազատ աղզիս ամենափոք-

Եիկ մասը անգամ այս կոտորիչ, չար, ժանտախտ և պատափիչ թունաւոր գազանէն, և Վրիստոսի հօտին Հուդայ և մատնիչ եղող չարէն իբրև կոտորիչ, կիզիչ և այրիչ կայծակի հեռանան ու փախշն : Այսնկ մէկ քանի հատ չար մատնիչներ զըտնուիլը ձանինալով՝ նախամեծար համարենք Վրիստոսի արեամբը գնեալ անմեղ գառանց հօտէն աբսորել և նետել զանոնք ու հեռացընել 'ի փառս Վրիստոսի որպէս զի մէյմ' ալ ասանկ ազգակործան չարիք չի պատահի մեր ազգին մէջ, և օր ըստ օրէ պէս պէս առաքինութեամբ բարգաւաճեալ կարենանք հոգեւոր և մարմնաւոր երջանկութեան ասպարեզը դիմել : Ազնիւ և հարազատ հայրե՛ր ւ եղայնե՛ր, երբ օգոստոս 21 ին այս մատնութիւնը ըրաւ, իսկոյն իմացայ սրտիս վրայ ծանր և մահաբեր վէրք մը բացուած . ինչ ընելս չ'էի զիտեր . որոշեցի որ երթամ ու այս անզգամը անձամբ տեսնեմ, կարծելով թէ այս մատնութեանը վրայ գոռողաբար չի պարծենար . որով սրտիս վէրքը առժամանակեայ կերպիւ ցաւէ ու տանջանքէ ազատ ըլլար, գիտեք ինչ ըրի, ե՛ղայրներ, գտայ զինքը Խակիւտարու շոգենաւին նաւամատոյցին վրայ . և հետը ընկերանալով շփոթութեամբ կ'սպասէի այն անիրաւ բերնէն մատնութեան խօսքը . ո՛վ անիրաւ . . . անբարտաւան Հուդան անգամ ըրած մատնութեանը վրայ ստրջացաւ : Խակ գու չար քան զի Հուդայի ինչպէս կը պարծիս անիրաւ և զրպարտիչ մատնութեանդ վրայ : Վիտե՞ք ինչ կըսէ սիրելիներ : (Պուչափառնարըն իցնուե քամալըլար վար ) իրաւ, ատանկ ըսիր, կը հարցընեմ նէ, կըկին մատնութիւն կ'ընէ : Վիտե՞ք ինչ կ'ըսէ ձեզի համար (պասթօն ըլլարտա վարըլուր) . հէպէթ պասթօնլար շիշլի իտիւր ) : Ո՛վ չար, անիրաւ մատնիչ . . . ինքզինքս հիմա մահէ ձրի ազատած կը համարիմ, և կաթուածամահ ըլլարվ փողոցը շիմնալուս համար Աստոծոյ գոհութիւն կուտամ . . . սակայն սրտիս վէրքը կըկին բացուեցաւ ու երանի թէ, այն միջոցին եր-

կիրք սղասուէր ու զիս իր մէջը առնելը . ո՞չ . . .  
որքան սարսափելի վայրկեան ու վտանգաւոր ժամա-  
նակ ձշմարիտ ազգասիրի մը համար , ո՞վ չար և  
անիրաւ արհամահիչ Արտուածային հօտի և մատ-  
նիչ Աստուածային աւաւղին , արդեօք Աստուծմէ-  
շիվախցա՞ր . միթէ մարդոցմէ՞ ալ չես ամաչէր . չի  
դիտե՞ս որու համար զրպարտութիւն և մատնու-  
թիւն կ'ընես այն ազնիւ , հաւատարիմ , արդար և  
Վրիսառոսի հօտը եղող հայոց ազգը չէ՞ մի ար-  
դեօք . (Օսմանեան հզօր Աթետութեան տունե ձշ-  
մարիտ հապատակութեամբ իր հարազատութիւնը  
կրկին և կրկին փորձերով հաստատող , և չորս հինգ  
դարերէ ՚ի վեր իր հըպատակութիւնը անխախտ  
պահող հայոց ազգը չէ՞ մի . այն հայերը չեն  
մի որ Չունաց ապստամբութեան ժամանակը ինք-  
զինքնին զոհած և հպատակութեան արդար պար-  
տականութենէն երթէք խոտորած չեն , այն հա-  
յերը չեն արդեօք , որ անցեալ տարի բողոքակա-  
նի մը թաղմանը առթիւ մեր բարեգութ ինքնա-  
կալ ձէննեթ մէքեան Ֆէթիհ Այովման Ապտիւլ  
Ուկահատ կայսեր բարի գիտաւորութեանը հակա-  
ռակ Լատիրնէ գափուի ազգային գերեզմանատան մէջ  
անտեղի խռովութիւն մը ելած ժամանակը զինւոր-  
ներուն վիրաւորած ատեն՝ անոնց ձեսքը կոտրած  
զմելին մը անգամ չլուսնուեցաւ . կոտրուենին  
մօտ էր . բայց նոյն կէտին դարձեալ իրենց հպա-  
տակութեան անարատութիւնը չ'աւրեցին ու պա-  
տիւնին չ'աղարտեցին : Ազդ՝ ուարսափելի՛ եղեռնա-  
գործ , որ կամ ինչ իրաւամբ կը յանդգնիս կա-  
ռավարութեան մատնելու այն անմեղ ժողովուրդը՝  
որ իրեն մահ կը համարի , երբոր կարավարու-  
թիւնը վրայէն վերցունելու ըլլայ իր բարի հա-  
յեցուածը և հպատակութեան իրաւունքները Ծննդե-  
ուզէ : Ու անիրաւ , այն հայերը չե՞ն , որ մէկ  
հիւալ մը անգամ չեն պահեր իրենց զրպանին մէջ  
վախնալով որ չըլլայ թէ տուն գացած ժամա-  
նակնին զրպանէն ի ինալով՝ իր տղայըը առնեն ու

իրենց աշքը կամ ուրիշ մէկ փափուկ տեղ մը  
խօթելու վտանգին մէջն ըլլան . այն Հայոց աղ-  
զըն է , ո՛վ անիրաւ , որուն համար , անիրաւ զըր-  
պարպութիւն կ'ընես “խամտ ունին կամ պառթօննին  
շեշտէ է ,” ըսելով : Ով անզգամ , արդեօք զմեզ մեր  
սիրելի և մեծազօր Տէրութենէն անիրաւ կերպով  
զատած ժամանակգ Յուդայէն պակա՞ս պատիժ  
պիտի առնես : Ով չար դուն որ այն ժողովուր-  
դին անմեղ արեանը կը փափաքէիր , մարդոց սու-  
րը մեր վրայ բարեմազթած ժամանակդ . արդեօք  
նոյն ժողովուրդին արիւնը քեզի և քու զաւկընե-  
րուդ դատախազ ըլլալով Աստուծոյ կայծակը և հը-  
զօրագոյն սուրը քու և քու չար սերունդիդ վրայ  
չլայիտի համնէր կամ չի՞պիտի համնի այժմ : Վու-  
խելքովդ ի՞նչ կ'ըսես , յի՞մար . արդեօք Տէրու-  
թիւնը յիշատակարաններ , հաշուետոմսակներ ու  
բարեգործական գրուած չ'ունի՞ մի կը կարծես . ար-  
դեօք Մայիսի 28 ին Հիւնքեար—Խսկէլէսիի հով-  
տին մէջ Վրիսառուի անմեղ գառանց հօտին ցան-  
կալի և միանգամայն պատուելի ու գովելի հանդէ-  
սը Տէրութիւնը իր յիշատակարաններուն մէջ ար-  
ձանագրած և Հայոց ազգին հաւատարիմ հպատա-  
կութեան ցանկին մէջ զրած չէ՞ . նոյն օրը չէ՞ որ  
այն սիրազումար ազնիւ խումբը վսեմափայլ Ակլիմ  
Փաշային բերնէն սա վկայութիւնը չաց : Պուաճա-  
կագլւուան ուրու ուրու չափար ճշմառնասն մարէլլենալ  
ուրուերէքինի գարնարաշ հեղի սէլլէն Աւ հետ հեղի գոգ-  
չայան բայելէր հեօթէմիշ իտիմ : Ահա՝ այս արդարա-  
խոհ Փաշային է որ կ'ըսես , անիրաւ թէ ժողովր-  
դեան մէջ զաշոյն կամ զինաւոր գաւազան կրողներ  
կան : Միթէ նոյն հանճարեղ պաշտօնատարը քու  
վար զգացումներովդ զդածեա՞լ կը կարծես . այն աղ-  
նիւ անձը կ'անարգէ քու մատնութիւնդ , և ազգա-  
սիրական սրբազնն կրակովը վառեալ ազնիւ երիտա-  
սարդներուն կատարած շքեղ հանդէսը կը գովէ ու  
կառավարութեան պարծանը մը կը համարի : Ալ  
խնդրեմ արգոյ ընթերցողներէս որ այս աստիճան

կծու գրելուս համար չնախատեն զիս . որովհետև  
ազգասիրութիւնը այնչափ կը դրեմէ զիս . որ ազգիս  
համար եղած սուտ և անիրաւ զրալարտութեանց վը-  
րայ ըլութիւն պահելը անկարելի է : ||` . . . Պ  
ըսուած զրալարտիչն է որ ինծի համար հրապարա-  
կաւ հերետիկոս է ըսելու կը յանդգնի , ինծի հա-  
մար որ Վրիստոսի ձամքան կեանքէ և ամեն բա-  
նէ առաւել ըլլալ գիտեմ , և երբէք ուզած լուտուած-  
սլաշտութեան արատ բերելիքը ընթացքի մը մէջ գրա-  
նուիլ՝ որ մարդկային տկարութիւնս ներած է : ||` յն  
||` . . . Պ . . . ն է՝ որ զրալարտութեան և մատնու-  
թեան սովորած ըլլալով և այս գարշելի թոյնը իր  
բոլոր երակներուն ու ոսկորներուն մէջ ընդունած  
ըլլալով կը բամբասէ և յանիրաւի կը զրալարտէ զիս  
“ հերետիկոս է ” ըսելով : Պիտցած ըլլայ , որ կը

Ը աբունակութիւնն

## Ա.Օ.Պ

Ա . . . Պ . . . ի՞նչ կը կարծես արդեօք պատ-  
րիարքը ուզելով և միանգամայն ազգին գործքելը  
քու չար կամքիդ համեմատ կարգադրելու փափա-  
քովդ ոլիտի կրնա՞ս ալ քու մոլար և յիմարական գոր-  
ծագրութիւններուդ ձեռնամուխ ըլլալ , ալ ասկէ  
ետքը ապահով գիտցիը որ ազգին երկու աչքին պէս  
սիրած և յարգած ու պատուած բարեսիրու և ազ-  
գասէր ամիրան չ'ես կրնար ապօրինաւոր կերպով  
նոյն բարձրապատիւ ամիրային ազգասիրական ու  
բարի սիրտը վիրաւորած ըլլալուն նոյն վէրքին դար-  
ման մը ընելով ամէն է երպով ալ ասկէ ետքը նոյն ա-  
միրան ցնակիտի յարդենք ու պատուենք կը կա՞րծես  
ա՞րդեօք ալ ասկէ ետքը ցի՞պիտի երթաք նոյն ազ-  
գասէրին յօգուտ ազգիս ինդիրքներ ու աղէրմաներ  
ընելով ազգին համար ամէն տեսակ ձեռնտութիւն-  
ներ ընել , ինչ կը կարծես ամէն ստակները դուն ա-

նիրաւութեամբ ուտելու իրաւունքը ուրկեց առեւնես, ( ինչպէս որ մինչեւ հիմա կերերէս ) ինչ զիս ով անիրաւ քու 14 սեպտեմբեր ժամը 11 էն ետքը իրատիեի կամուրջին վրայ մէկումը հետ նոյն օրուան աղջային ժողովին վրայ խօսած ժամանակդ ( օ չափկընլարա լագըրտը քալմատը յա օնլար հագող օլուսկ ետէսիզլիքէրինի կէօրաիւլէր ) ըսած խօսքը նոյն առաքինասէր և խաղաղասէր ամիրան ըսելու ըլլանէ արդեօք քեզի ի՞նչ պիտի ըսէ, ի՞նչ թէ որ անոր սրտին արդարութիւն դիտցած կ'ըլլամ կը տարակուսիմ բայց գիտեմ որ Ճշմարիտ քրիստոնեայ է, «Քրիստոսի հօար երկու մաս բաժնելու փափաքով երկպառակիչ ու անիրաւ ամբաստանողին ի՞նչ պատիժ ու յանդիմանութիւն կընայ ըլլալ նէ, քեզի ընելուն ու ըսելուն անկասկածեմ, անիրան, չես մտածեր որ այն օրուան արքունի բարձրագոյն հրամանաւ աղջային ժողովին մէջ եղողները նախ սրբազն եպիսկոպոս մընէ որ ժամանակաւ պատրիարքութիւն ալ ըրած է և ոչ թէ հիմակուան քու ուղած պատրիարքիդ պէս, ո՛վ անմիտ չե՞ս մտածեր որ նոյն օրը ժողովին ժողովին ժողովազները ֆէրմանի այն և սատրի քէրեմներով աղջին երեսփոխաններն են . անոնց համար ասանկ ամբաստանութիւն և հայհոյանը ընէս նէ, անոնց անձնական պատույն տպած ըլլալէդ զատ՝ տէրութեան բարձրագոյն հրամանաւ ձանցուած և որոնց է ֆէնտի տիտողմներուն արատ բէրող ու արհամարանը ընելու մարդ ինտո՞ր կըլլաս կոր դուն ո՛վ ես, ինչպէս, նէ, ճիէ՞ս տէրութիւնը քեզի չի՞պիտի հարցունէ կը կարծես, դուն ով ըլլալդ քեզի պատմեմ ( որչափ որ դուն ինքինքու չի ձանցող անիրաւներէն ես ալ նէ ) դուն այն չարը չե՞ս որ 21 օգոստոս պատրիարքը ժողովուրդին բազմութիւնը ու շրփոթութիւնը տեմնալով երբ պատրիարքանէն դպրատուն իջնալ չէր ուղեր և ժողովուրդին իրաղաղասէր և առաքինի մասը պատրիարքը կարգիլէր դպրատուն իջնալէն դուն այն չարը չե՞ս որ պատրիարքին քու կուրնալու աչքերովից աւ իրնես որ արտօնոք դպրատուն իջնայ և այս

ամենասարսափելի ու ազգակործան խռովաթիւնը ելլայ՝ ահա բուն չարութեան թոյնը դուն չես մի արդեօք, և՛ և՛ դեռ շատ գրելու բաներ կան . սա կայն տպագրիչը կարգիլէ, բայց Ո՞այիս մէկ հրատարակելու դրբերնուս մէջ առաքինի ժողովուրդը պիտի կարգայ, արդեօք դուն և քու չար ընկերներդ Ո՞ . . . և Չ . . . Ա . . . ասանկ խորհեցաք շփոթութեան ու երկպառակակութեան լարը ազգին գառներուն և ճշմարիտ քրիտաննեաններուն առջեւ լարելով չարութեան ու խռովութեան սատանային տանելու համար . . . : Ի՞ա քու մէկ երկու ընկեր կամակից ու թունաւորիչ չարերնալ յիշեմ, սակայն ինձի բարեկամ եղող ազգասէրներս ինձի պիտի վըտանան թէ 4—5 չար ըսիր հիմա 4—5ը 8—10 եղաւ, սակայն ի՞նչ ընեմ սիրելիներս քոլէռան երբոր սաստկանանէ՝ յանցանքը բժշկի՞ն կը լայ արդեօք, երբոր քոլէռակէն բրոնը լողիներ կայ տէյի իմացունէ, որովհետև ասոնք անձնական կերպով գործածեմ ուստի պարտքսէ ու իրաւունքսէ ազգիս իմացունել:

Ո՞ւ Ո՞ . . . Շ՞ . . . դուն ինչու համոր ազգիս յարգելի ու պատուելի և էն մեծ թաղական ժողովին մէջ զմնուերես ո՞վ չար, դուն որ իմհօրը իրեք տարվան անգործադրելի մնացած կը տակին ստակը առնել ու ազգին թաղական ժողովքին հաւատարիմ մնտուկին տալու գործադրութեանը չես ջանար և միանգամայն ամիսմը ու ամիսուկեսէ ՚ի վեր կերթամ կուգամ և մինչեւ այսօր անգործադրելի ձգելէդ զատ այսօր որէ 16 սեպտեմբեր թաղական ժողովոյ սենեակը եկած ժամանակս կը սէժէ ժէ դահա պաշաճ լաշաճաղը լահըրտսընը էլլեյէ կը սես, ու ես քեզի կը հարցունեմ թէ որ ամիսուկես միջնցին մէջ դեռ խօսքի նոր պիտի ըսկըսինքնէ, կը տակին ստակը երբ պիտի առնուի . կը կին կը հարցունեմնէ զիտէք ինչ կը պատասխանէ սիրելի հայրեր ու եղբայրներ իմ իր ցանած խռովութիւնը պատճառ կուտայ զիտէք ինչ կըսէ (որովհետև խռովութիւն ցանող կըսէմ վասն զի նոյն թաղին մէջ գանուող

ամէն մարդու տուն ժամկոչ կը խրկէ զեռ ամէն մարդ անկողինը իբէն որ պատրիարքը ուզելու սատանայական ստորագրութեան մասնակից ըլլալով այն բարեսիրտ ժողովուրդը սատանային ցանկին մէջ իրենց ձեռքովը զրել տալու համար , որովհետեւ ինքնալ սատանային ընկերը ու դաշնադիրը ըլլալը մինչեւ հիմա ըրած զործքերը կը հաստատեն ) աճելէ եւէ օլմաղ , այն բնակչութիւն , եօյլէ իսէ արշամա էսմէն են մշյետէ էլլու կը սեմ զերո օ էսմէն լենինի ալեւլոյն մատին լաւին պոտ գետերինին կը տակը ճանը ուեսլէր , եւ անսկի պէր հէջէ էսմէն էեղորեն ( մեր կերած հացը չի գիտնաք դժողբի բըրան մէջ եփած հացնէ ) օլմաղսն օլ բահմէնլի գետերին չի թւլել ողբանատ եօլին վէ լելէք օլմու ( ոչ թէ մինակ հայրըս այլ հօրեղեայրս ալ ) հասըլ օլ բահմէնլինին իւշ սենետէն ուերու սենեսի պէշը լուսուլ իւշը լու իւշունիը պոտ պէր ժաշ կաքիւտան ուերու իւշը լուսը ուլըրագընը ) ասոր վրայ կը սկսիմ ես իրենց ծանուցանել ահա իրենց պատրիարքը ուզելով ազգին կանոնը ու կարգը խանգարելով ու երկարուուակութիւններու ու շփոթութիւններով ազգը կործանելու փափաքնին բացատրել , նախ պատրիարքին երդմազանցութիւնը կը պատմեմ , իսկոյն զազաքարաց , կատաղի , այլանգակ և քոռող ու ապստամբ դէմքովը սենեակին մէջ տեղը կը ցատկէ իբրև պատառիչ կապիկ և կը սկըսի դժողուային ահսոելի ձայնովը պուալ , ճըւել , ու սաստիկ խօսել ու հարցունել , ոիմ անդիշ ունեմիշ անդիշ . . . անօյլէ պատայիմ անօյլէ պատայիմ , անօյլէ պատայիմ խելար զիւրահարի հարցունելընել , գիտէ՞ը ինչ կը պատասխանեմ սիրելիներս սենին սիւահեննեն տուա օլամաղ ձէպրեն վէ միասիսէնիուղ պաշընալու ուրմայտ , պուրաւը անօվալելին ալինին նորաքա նահալէ անյիւլ էիւր ոոյցաղա արզու վարիւ Պատը լ'սէ վէ սայը չօչ սոսորէնլի անվալելի ( Ամանիւնին նորաքա նահալընըն վար օրսայտ անսունիունի ճէլը իտէրսին օրպատ ալիմար հիւրիւնը սահապալարը եօնիւնակ հատկընը լուսուիդ վէ լեռիտ իտէրտւերիմ տէրիմ , վէտու ճէլապընադէ չանահան ենմէյիտ լեկուուի վէ լեռիտ իտէրտւերիմ տէրիմ , վէտու ճէլապընադէ չանահան ենմէյիտ լեկուուի վէ լեռիտ

բար թէօուե չեմասի եյի աստամլարը ոկեօյլէ մնաասիալէթոեց  
աստամայ ոկենալէթուն խռալանեցն պէօյի-ուլի-ողի-միւս լուսնըըմ ,  
ուհաւո ճը առլիյեւ ու իլասալը եօս աստամ ինդի իննէ ուշու<sup>1</sup>  
ուշու սօրարսա հայրը ուկովլէթուն ահկէտանընա իլասկաթուուլ ,  
ինօղիտակնու վէ ինստանլարատան ունանմայուու Ալլասկատուու աս-  
լա գօրգմու ճանանալըն որու-լունուու օրատառա , ոլինիմ որո-  
լունմամ միկասիու ալմաշ ունյու եռ-մուրճագուան գաշար ին-  
ու գաշարը ) ով սիրելի հայրեր լանք ու ողըանք ձա-  
ւինք ու տրտմիք ասանկ խռովութեան ժամանակ այս  
շարերը ժամանակէն զտած իրենց սատանայական  
կիրքերը յանդուցանելու , միթէ չէք մտածեր որ ձեր  
սիր ու միաբանութիւն ջունենալը չէ որ ասանկ գա-  
զանները ազգին պատռաւոր ու միանգամայն առա-  
քինի գասերուն մէջ կը ձգէ կոր , միթէ ձեր խր-  
ռովութիւնները չէ որ չար և սպատառիչ ասանկ մէկ  
քանի շարերը կը ձգէ կոր Վրիստոսի արեամբը զըն-  
ված ժողովուրդը իրենց սատանայական ակրաններուն  
տակ ճշգմել ու ծամել , միթէ ձեր անմիաբանու-  
թիւնը չէք որ 'ի Վրիստոս խսղաղութեան միա-  
նալով ազգին գործքերը ասանկ շարերու յանձ-  
ներ եք որ տակնու վրայ կընենկոր և բարե-  
սիրտ մէծեր առաքինիներ հարուստներ ամիրաններ  
ու տերեր իմ արդեօք ձեր սիրտին առաքինութիւն-  
ները կը ձըգեք որ ձեր բարի կամքերուն հակա-  
ռակ ասանկները ազգին գործքերուն մէջ մնալով  
ազգը թունարեն , միթէ սիրելի հայրեր եղայրներ  
ու տերեր իմ , միթէ ձեր ասանկ շոռթութեամբը  
ու կիրքով , որբերը անմիսիթար , հիւանդները ան-  
դարման , ծերերը անսպատսպար , խելաքարները  
անտեր ( խելաքարները անտեր կըսեմ օրովհետու թէ  
որ ազգը խելաքարները ժողուելու փափար ունենայ  
նախ . . . ը ետքը Ա . . . Գ , Ջ . . . Ա , Բ . . .  
Պ . . . , Ա . . . Շ . . . կը ժողվէ ու յիմանո-  
ցը կը դընէ ու ինծիալ կը նախատէ թէ այսչափ  
տարվան ազգը որ խռովութիւնը մեզայ , մեզայ , ու  
անմիաբանութիւնը իբրև հաւատոյ մաս ճանցած  
է , անոնք իրենց կիրքերէն ետ բերել տալու կա-

ըողութիւն ունեցող զուն եղար : Բայց զիսնալով  
Հիսուսի Քրիստոսի զօրութիւնը մեծ ըլլալը , կա-  
զաքեմ որ իւր խաղաղասիրական չնորհը չնորհ ընէ ,  
ալ ուրիշ բան չեմ ըներ ահա կարողութիւն ու  
դրից զօրութիւնը ) բանտարկեաները 'ի բանտի ,  
ծարաւները 'ի ծարաւութեան , մերկերը 'ի մերկու-  
թեան , անօթիները յանօթութեան , և՛ և՛ ամէն  
խեղջերը 'ի խեղջութեան ձգողները ահա ձեզի կի-  
մացունեմ այս խռովութեան շարունակուելուն փա-  
փաք ունեցողներն են ( որոնց կարգնեն գլխաւորապէս  
չամուրջեան , և կրօնքը փոխող դժոխակն դարին  
հեղինակը ) ու այս փափաքը ունեցողներուն մեր եր-  
կրպաքելի Քրիստոս Աստուածը ինչ պիտի ըսենէ ա-  
նիկայ բացէք ու կարդացէք : ( Ո՞տի . ԽԵ . 34 . )  
տի ասիկայ կարդալէ ետքը ձեզի կուգամ լալով ու  
ողբարով , արտասուզք ու հեծեծանօք , աղաչելով ու  
պաղատելով , խնդրելով ու աղերսելով , որ ազգին կո-  
րուստը ու առջևի անդանդը միաբերնիդ բերելով 'ի  
փառս խաղաղասէրին տեառն մերոյ երկրպաքելի Յի-  
սուսի Քրիստոսի այս խռովութիւնները մեկդի ձը-  
գելով սիրով , միաբանութեամբ , հաւասարութեամբ ,  
իրաւամբ և կրօնք լուսաւորչականի վայելուչ և Քրիս-  
տոսի արեամբը գնված հօտի սպառոյն համեմատ  
վարուող ըլլալով մէկտեղ գանք առանց ժամանակ ան-  
ցունելու ազգային գործքերը արդարութեամբ վեր-  
ջացունելու որովհետև ասանկ մընայ ինչ անպատմելի  
դէշութիւններ ելլալը ու ազգը կործանելու վտան-  
քի մէջ ըլլալը յայտնի է ( հարցուցէք բժիշկ մը  
դտէ՞ք գանգուէնան ձգէ նէ ինչ կըլլայ ու ինչպէս  
մարդը կը մեռցունէ , ինչպէս Ո՞խակեան Ո՞եծա-  
պատիւ Նիկողոս աղան . բայց մեր մէջը Ճարտար ,  
հանձարեղ , և ուշիմ բժիշկներ շատ ըլլալով այս  
հիւանդութեան վտանգը մեզի աղէկ Ճանչցուցածէն  
ուրեմն փառք մեզի և հազար փառք որ ասանկ  
բժիշկներ ունինք մեր մէջը մանաւանդ ասանկ Ճար-  
տար հոգեոր բժիշկներ ալ կայ նէ , շաքարը շա-  
պէն զատող մարդ շատ չիկայ . ինչ օգուտ :

ԱՄԵՆԱՀԱՐԿԱՀՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Երդարեւ մեր առաջին թերթին մեջ  
ունեցած նպատակնուս երբէք չի հեռանաւ-  
լու համար և զրած ամեն մեկ նիւթերուն  
շամանթաղին մեկ կետին անգամ միշտ  
պաշտպան և ջատաղով ըլլալնուս, որչափ  
որ չեի ուզեր իմ ազգասիրութեան ամե-  
նահարկաւոր պարտքերէս չի խոտորիլ կետ  
մը անգամ . և միանգամայն աղղիս էն ու-  
ժնչ ու տկար մեկու մը ամբաստանուիլը  
ինծի ամբաստանածէն աւելի համարել .  
բայց և այնպէս թէ որ ասոնց ըոլոր կե-  
տերուն դիտողութիւն ընենք, մեր առա-  
ջին մասին խորադիր նպատակ և ընարան  
զրած զրամագլուխնուս այսինքն սէր  
և միաբանութիւն արդարութիւն և իրա-  
ւունք և կրօնք լուսաւորչականէն իրեւ  
խոտորած գտնալով զիս, և երկնչելով  
կողմնասիրութեան շահասիրութեան և  
մանաւանդ արծաթսիրութեան սուկալի և  
ահւելի վիճերուն մեջիյնալէս վախցած շր-  
փոթած և վերջին աստիճանն այս մատան-  
ջութիւններու մեջիզած ժամանակս և յու-  
սահատած զրիչ ու կաղամարէս բռնաբար  
մեկ որոշում մը ու խորհրդածութիւն մը  
սպասած ժամանակը վերջին աստիճան

շփոթութեան մէջ ըլլալով յանկարծ խաղաղութեան հրեշտակին ահուելի սարսափելի և միանգամայն քաջ զօրեղ և վեհանձն դէմքը տեսայ աջ կողմն կանգնած և զիտես թէ հուր և 'ի դատապարտութիւն և միանգամայն միսիթարիչ դէմք մը ոնէր իր փռայ, սակայն այս միջոցին գրիչներուն դադարման միջոցն է, բացառելը մինակ աղղասիրութեան ու միաբանութեան և սիրոյ աչք ունեցողները կը նային տեսնալ ու ենթադրել սկսեցի դողալու սարսափիլ գոյնս մոխրագոյն, աչքերը արտասուալից և միանգամայն սիրտը վշտալի եղաւ, այն միջոցին հրեշտակը մեզի պոռաց ըսելով “զիտես ինչու սատկութեամբ կուզամ. որովհետեւ դուն Յիսուսի Քրիստոսի ամենասուրը և երկրպագելի խաչելութեանը յանդգնեցար, չամբչցար աղերսիդ խորագիր դնելու ու տակն ալ ինչ գրեցիր զիտես, սէր և միաբանութիւն արդարութիւն և իրաւոնք և կրօնը լուսաւորչական, դուն այս ընարաններու ձեռք զարնելու կարողմարդ ես, չէ, բայց զիտեմ նոյն օրը որ գրիչդ ձեռքդ առիր՝ Յիսուսի Քրիստոսի երկրպագելի սուրբ խաչը ձեռքըդ առիր 'ի նշան յաղթութեան և կշիռ անարատ և աստուածային և միանգամայն առաջնորդ արքա-

յութեան և ուղղից առ ամենաբարձրեալըն  
Սուրբ երրորդութեան , և միանգամայն  
արտասուալից աչօք և դառն արտիւք ինդ-  
րեցիր աղքիւրն իմաստութեան և ճառա-  
գայթաննկարագրելի յաթուոյն Ըստուա-  
ծային 'ի հոգւոյն սրբոյ այն իմաստութեան  
մէկշառաւիզը , որն որ առաքելոց 'ի վերնա-  
տունը շնորհեց , ասոնցմով պիտի կարենաս  
անպատճառ ամեն բան զրել խօսել , պատ-  
մել , ճառել , տրամարանել , իրաւաբանել  
և աստուածաբանել , և այս հոգին սրբոյ  
շնորհը ունեցողները ինչպէս որ զրպար-  
տութենէն նախատինըէն , ծեծէն , թու-  
քէն , տանջանքէն , սուրէն , արիւնէն , և  
միանգամայն մահէն չի վախցան , դուն ալ  
ասանկ պիտի ըլլաս և կը յուսամ 'ի սէր  
խաղաղասէրին Յիսուսի Քրիստոսի պիտի  
ըլլաս ալ . որովհետեւ չիկայ աշխարհի մէջ  
մէկ փառք մը և աշխարհը մէկտեղ առ-  
նելով և բոլոր աստեղները ու համեստեղու-  
թիւնները և բոլոր տիեզերք անդամ չեն  
կինար հուսասրիլ այս խաղաղասիրու-  
թեան փոխարին առնելու փառքիդ , որնէ  
այս արտասուալից աչօք հարցուցի , պա-  
տասխաննեց , դեռ պրիչը չի չորցաւ ինչ-  
պէս չես յիշեր ըստ ահա կառնես այս  
վարձքը թէ որ ամեն տանջանքի և մինչեւ  
մահու պատրաստ ըլլաս շատ աղաչելէսկա-

քրահաւահաւ բանելովի իւր սոսկայի և միան-  
գամայն ահաւոր ձայնը հանելով կը զոչէ  
.... “Կերանի խաղաղաբարաց զի՞նոքա որ-  
դիք Սոտուծոյ կոչեսցին” դուն հիմայ այս  
Սոտուծոյ որդիք բըսպու փառքը ինչով կը-  
նաս փոխարինել, միթէ հարստոթիւն,  
փառք, ինչ, անդամոնդ, և որ մարդը որ  
կասպի աշխարհքի վրայ այս փափաքէն  
զատ ինչ կրնայ ոնենալ, ո՞ր քրիստոն-  
եան պատրիարքը ուզելով այս փառքէն  
կը հեռանայ, որ խղճմտանք ունեցողը  
մարդու համար Սոտուածային աեսութիւ-  
նէն կը զօկուի, որ անձը սատանայական  
կրքերու համար ու իր բարբարոսութիւնը  
առաջ տանելու համար Սոտուծոյ որդիք  
բըսպ ձգելով, հոգւով մարմնով սատա-  
նային երկրագութեան կերթայ և որ ա-  
նիրաւը իրաւանց և արդարութեան աստ-  
ուածը ձգելով, անիրաւութեան և չարու-  
թեան չաստուածին կերթայ երկրագուելու  
փայ, փայ, փայ և աւաղ կրկին աւաղ, գի-  
տէք սիրելի հայրեր և եղբայրներ ահա  
այն մարդն է գրիստոս լացունողը Քր-  
իստոսի չարչարանքները Սոտուածու-  
